



ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**2017Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ**

Ցուցանիշներ 2017Թ.

2017 ԹՎԱԿԱՆ



Գլոբալ Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2017 թվական առաջին կիսամյակային գործունեության սույն զեկույցը ներկայացնում է՝

- ❖ Վարկային կազմակերպության արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը
- ❖ Կարևոր դեպքերի նկարագիրը,
- ❖ Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը (համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 26.10.2010թ թիվ 267Ա որոշմամ) գրանցված ունիվերսալ վարկային կազմակերպություն է, որը ձևավորվել է «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ և «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ միաձուլման արդյունքում, ինչպես նաև ընդլայնվել է «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և «ՋԻ ԷՖ ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ԸՆԴ ՔՐԵԴԻԹ ՔՈՄՓԱՆԻ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի միացման ձևով վերակազմակերպման արդյունքում՝ մասնակիցների/բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի 2014թ. հունիսի 09-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 03):

Ներկայումս Ընկերությունը հանդիսանում է «ԿՐԵԴԻՏ ՅՈՒՆԻՈՆ», «ՎԱՇԻՆԳԹՈՆ ՔԱՓԻԹԱԼ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունների և «ՋԻ ԷՖ ՍԻ ՋԵՆԵՐԱԼ ՖԱՅՆԵՆՇԸ ԸՆԴ ՔՐԵԴԻԹ ՔՈՄՓԱՆԻ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի իրավահաջորդը:

Ընկերությունը իրականացնում է «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունները՝ ՀՀ կենտրոնական բանկի թիվ 35 լիցենզիային համապատասխան:

Ընկերության հիմնադիր կազմակերպություններից «Կրեդիտ Յունիոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ՝ իր գործունեությունը ծավալել է հիմնականում իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների ֆինանսավորման և սպառողական վարկավորման շուկայում, «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ՝ մասնագիտացված է եղել բացառապես ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկայում,

«ՋԻ ԷՖ ՍԻ ՋԵՆԵՐԱԼ Ֆայնենշլ Ընդ Քրեդիթ Քոմփանի» ՈՒՎԿ ՍՊԸ՝ մասնագիտացված է եղել բացառապես Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսական վարկավորման շուկայում:

Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների շրջանակներում իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորում:

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր ռազմավարությանն ու իրականացվող քաղաքականությանը, անդամակցում և համագործակցում է ՀՀ գործող մի շարք հաստատությունների հետ:

«ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ ստեղծման հիմնական նպատակն ու առաքելությունը ՀՀ ֆինանսական շուկայի առաջատար դիրքերում հայտնվելն է, հանրությանը վարկային գործառնությունների իրականացման լայն հնարավորություններով ներկայանալն ու ինչու չէ նաև մրցակցային շուկայում լուրջ դերակատարություն ունենալը: Այս ամենի ներքո կազմակերպության ամբողջ ռազմավարությունը և հետագա գործունեության ամբողջ ուղղվածությունը պայմանավորված է նշյալ ուղենիշով:

Ընկերության գործունեության հիմնական ռազմավարությունը նպատակաուղղված է ակտիվ վարկային քաղաքականության վարմանը: Վերջինս իր դրսևորումներն է ստացել վարկային պրոդուկտների առավել լայն տեսականու, ինչպես նաև վարկերի տրամադրման առավել մատչելի պայմանների առաջարկմամբ, վարկերի տրամադրման ու վարկային ծառայությունների մատուցման մասնագիտական մոտեցմամբ, հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ և այլն:

Ընկերության առաքելության կարևոր կողմերից է նաև բնակչության առավել խոցելի և համեմատաբար ցածր եկամուտներ ունեցող և տնտեսապես ակտիվ բնակչության համար փոխառու միջոցների հասանելի դարձնելը, ինչպես նաև վարկառուների կենսամակարդակի բարելավումը:

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 1000 (հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության բաժնետերերն են հանդիսանում՝

Բաժնետերեր և ներդրողներ	Մասնակցության չափը կանոնադրական կապիտալում	Բաժնետոմսերի քանակը
Էդուարդ Մուրադի Մարության	33.3314000%	499 971
Արայիկ Ռազմիկի Կարապետյան	28.1186000%	421 779
Գագիկ Նիկոլի Վարդանյան	33.5299000%	502 949
Կարեն Իսիչի Դարբինյան	5.0201000%	75 301

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն չի իրականացնում իր կողմից թողարկված արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում՝ Ընկերությունը չի հրապարակում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2009 թվականի հունիսի 2-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշման 25-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը համաձայն նույն կանոնակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետի:


«ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ	- Էդուարդ Մարության
Խորհրդի անդամ	- Արայիկ Կարապետյան
Խորհրդի անդամ	- Լուիզա Իգրարյան

«ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Գործադիր տնօրեն	- Լուիզա Իգրարյան	- 1997 թ-ից ֆինանսական համակարգում
Գործադիր տնօրենի առաջին տեղակալ	- Կարեն Հովհաննիսյան	- 2006 թ-ից ֆինանսական համակարգում
Գործադիր տնօրենի տեղակալ	- Արամ Ղուկասյան	- 1999 թ-ից ֆինանսական համակարգում
Վերստուգիչ	- Օնիկ Խերանյան	- 2005 թ-ից ֆինանսական համակարգում
Գլխավոր հաշվապահ	- Սուսաննա Խաչատրյան	- 1998 թ-ից ֆինանսական համակարգում

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ԳԼՈՒԽԼ ԿՐԵԴԻՏ



Ներկա փուլում ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն ֆինանսական ծառայություններ է մատուցում ՀՀ մայրաքաղաք Երևանում, նրան հարակից մարզերում, ինչպես նաև Արցախում: Մասնավորապես, Արարատի մարզում կազմակերպությունն աշխատում է 23, Արագածոտնի մարզում՝ 31, Արմավիրի մարզում՝ 37, Կոտայքի մարզում՝ 9, Լոռու մարզում՝ 2, Շիրակի մարզում՝ 1, Գեղարքունիքի մարզում՝ 5 և ԼՂՀ Ստեփանակերտի և Հադրութի շրջանի 2 քաղաքային և գյուղական համայնքներում:

Որպես կարճաժամկետ ռազմավարություն ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է առավել հասանելի դառնալ հաճախորդներին, ֆինանսական ծառայություններ մատուցելով նաև այլ տարածաշրջաններում:



ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախորդների սեգմենտավորումն ըստ մարզերի և համայնքների

	Արմավիր	Արագածոտն	Արարատ	Կոտայք	Գեղարքունիք	Լոռի	Շիրակ	ԼՂՀ
1	ք. Արմավիր	ք.Աշտարակ	ք. Արտաշատ	ք.Եղվարդ	ք. Գավառ	ք. Սպիտակ	Հայրենյաց	ք.Ստեփանակերտ
2	ք. Էջմիածին	ք.Ապարան	Ազատական	ք.Բյուրեղավան	ք. Վարդենիս	Սարամեջ		ք.Հաղրուփ
3	ք. Մեծամոր	ք.Թալին	Այգավան	Նոր Երզնկա	Վարդենիկ	Լեռնանցք		
4	Ակնալիճ	Ագարակ	Այգեպատ	Նոր Գեղի	Փոքր Մասրիկ			
5	Այգեշատ	Ավան	Այնթապ	Ջրվեժ	ք. Մարտունի			
6	Ապագա	Արագած	Արևաբույր	Գառնի				
7	Առատաշեն	Արագածոտն	Բաղրամյան	Պոռչյան				
8	Արագած	Արուճ	Բերքանուշ	Արգել				
9	Արգավանդ	Արտաշավան	Բյուրավան					
10	Արևաշատ	Ափնագյուղ	Բուրաստան					
11	Արշալույս	Բազմաբյուր	Գեղանիստ					
12	Արտիմետ	Գեղաձոր	Դալար					
13	Գայ	Դերեկ	Մխչյան					
14	Գեղակերտ	Լեռնարոտ	Մրգավան					
15	Գրիբոյեդով	Ծաղկաշեն	Նորաշեն					
16	Դաշտ	Կարբի	Սուրենավան					
17	Խորոնք	Կոշ	Տափերական					
18	Ծաղկալանջ	Ղազարավան	Փոքր Վեղի					
19	Ծաղկունք	Ճարճակիս	Այգեգարդ					
20	Հայթաղ	Մելիք	Նոր Խարբերդ					
21	Հայկաշեն	Նոր Ամանոս	Քաղցրաշեն					
22	Հոկտեմբեր	Նոր Եղեսիա	Դեղձուտ					
23	Հովտամեջ	Ոսկեհատ	Դաշտավան					
24	Մարգարա	Ոսկեվազ						
25	Մեծամոր	Ուշի						
26	Մրգաստան	Պոռչյան						
27	Շահումյան	Վարդենուտ						
28	Շենական	Տեղեր						
29	Ոսկեհատ	Փարպի						
30	Ջրառատ	Օհանավան						
31	Ջրարբի	Օշական						
32	Սարդարապատ							
33	Վարդանաշեն							
34	Տանձուտ							
35	Տարոնիկ							
36	Փարաքար							



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



Ֆինանսական ծառայություն մատուցելիս կազմակերպությունը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- ☐ Պրոֆեսիոնալիզմ
- ☐ Վստահություն
- ☐ Թափանցիկություն
- ☐ Ճկունություն
- ☐ Արդյունավետություն
- ☐ Նորարարություն



Հաճախորդների հետ աշխատանքի սկզբունքները

ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն ձգտում է հաստատել երկարաժամկետ համագործակցություն յուրաքանչյուր հաճախորդի հետ: Այս նպատակով հաճախորդների հետ իր աշխատանքում ընկերությունը հավատարիմ է մնում կորպորատիվ քաղաքականության հետևյալ սկզբունքներին.

- ☐ Հուսալիությունը, նվիրվածությունը չափանիշներին հաճախորդների որակյալ սպասարկման բարձր մակարդակի պահպանում, հաճախորդների շահերի պաշտպանություն:
- ☐ Հաճախորդների շահերից ելնելով, պատասխանատու վարկավորում և SMART սկզբունքների պահպանում, ինչը ենթադրում է

- Հաճախորդի վարկային գերծանրաբեռնվածության կանխարգելում
- Թափանցիկ և պատասխանատու գնագոյացում
- Ժամկետանց գումարների հավաքագրման պատշաճ մեթոդներ
- Աշխատակիցների կողմից հարգալից վերաբերմունք հաճախորդների հետ
- Հաճախորդների բողոքների քննարկման և լուծման մեխանիզմներ
- Հաճախորդի և նրա վարկի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանում



- ☐ Համապատասխանությունը օրենքներին, էթիկայի նորմերի եւ արդար համագործակցության կանոնների պահպանումը, իր պարտավորությունների ժամանակին կատարումը եւ դրական հեղինակության ձեւավորումը:

- ☐ Քաղաքական դաշտում չեզոքության պահպանումը և անկախությունը որևէ կուսակցությունից և խմբավորումից:
- ☐ Գործունեության իրականացում ի շահ հաճախորդների եւ բաժնետերերի:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ

Ընկերությունը ռազմավարական ծրագրերի և նպատակների իրականացման հիմնական գործոն է համարում մարդկային ռեսուրսների զարգացումը: Ելնելով դրանից, աշխատակիցների հետ հարաբերություններում ընկերության ղեկավարությունը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով:

- ❑ Բոլոր աշխատակիցների աշխատանքային պարտականությունների հստակ սահմանազատում:
- ❑ Աշխատակիցների համար ստացված գիտելիքների, ինչպես նաև ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում:
- ❑ Պարբերական դասընթացների միջոցով մասնագիտական գիտելիքները շարունակաբար բարելավելու հնարավորության ստեղծում:
- ❑ Լավագույն արդյունքների ստացման նպատակով աշխատակիցների Խրախուսման համակարգի կիրառում, որով արդյունավետորեն կգնահատվի կազմակերպության առաջադրած խնդիրներին հասնելու աշխատակիցների ջանքերը:


BONUS

Քաջ գիտակցելով, որ բարձր որակավորում ունեցող մասնագետները հանդիսանում են ընկերության հաջողության գրավականը, կազմակերպությունում մեծ ուշադրություն է դարձվում աշխատակիցների պարբերական վերապատրաստմանը և ատեստավորմանը: Հատկանշական է, որ աշխատակիցները մասնակցում են թե ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ կողմից, այնպես էլ այլ մասնագիտացված ուսումնական հաստատությունների կողմից կազմակերպվող մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

2016թ. ընթացքում կազմակերպության կողմից աշխատակիցների համար կազմակերպվել են մի շարք սեմինարներ հետևյալ թեմաներով.

- <<Մարդկային ռեսուրսների կառավարում>>
- <<Պարտավորություններ, պարտավորությունների կատարման ապահովման միջոցներ և վեճերի լուծում
- <<PR և մարքեթինգ>>
- <<Եկամտային հարկ>>
- <<Բիզնես վարկավորում>>
- <<Սպառողական կրեդիտավորման մասին օրենք>>
- <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցները>>
- <<ՀՀ արժույթ>>
- <<Հիփոթեքային վարկեր>>





2016թ. և 2017թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում ընթացքում այլ մասնագիտացված ուսումնական հաստատությունների կողմից կազմակերպվող մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցել են.

- "Ակտիվների և պարտավորությունների կառավարում" - 2 մասնագետ
- "Հարկային օրենսդրությունում կատարվող փոփոխությունները" – 1 մասնագետ
- "Բանկային ռիսկերի բացահայտում, կառավարում և վերահսկողություն " – 3 մասնագետ
- " Բիզնես օրենսդրության նորություններ" – 2 մասնագետ
- " Մարքեթինգի հիմունքների գործնական դասընթաց " - 1 մասնագետ
- "Վարկառուի վարկունակության գնահատում և խնդրահարույց վարկերի կառավարում" – 4 մասնագետ
- " Մասնագիտացված հարկային դասընթաց " – 1 մասնագետ
- "Մարդկային ռեսուրսների կառավարում, ՀՀ Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններ" - 1 մասնագետ
- "Շարժ. գույքի նկ. իրավ. գրանց. նոր օրենսդր. հաջորդ. գրավի ինստիտուտի , գրավի առարկ. նկատմամբ երրորդ անձանց կողմից կիր. սահմանափակ. վերաբերյալ նոր փոփոխությունները, ֆին. համ. սպառողների իրավունքների նոր կարգ. և սպաս. փոփոխ., երաշխ. ինստիտուտը, խնդիրները և առաջարկվող փոփոխ. " - 1 մասնագետ
- "Վարկային մասնագետի պատրաստում " - 1 մասնագետ
- "Խորացված դասընթաց աշխատանքային օրենսդրության վերաբերյալ' ' - 1 մասնագետ



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ



Հիփոթեքային վարկավորման շուկայում Ընկերությունը հանդիսանում է



KfW բանկային խմբի "Գերմանահայկական հիմնադրամ ծրագրի կառավարման գրասենյակի" կողմից ՀՀ-ում իրականացվող "Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում" վարկային ծրագրի մասնակից սկսած 2007թ-ից:



"Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման" պետական նպատակային ծրագրի մասնակից, որը իրականացվում է "Ազգային հիփոթեքային ընկերություն" վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ մեկտեղ սկսած 2009թ-ից:



"Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան" պետական նպատակային ծրագրի մասնակից, որը իրականացվում է "Բնակարան երիտասարդներին" վերաֆինանսավորող վարկային կազմակերպության հետ սկսած 2010թ-ից:

Ընկերությունը հանդիսանում է նաև



"Վարկային կազմակերպությունների միության" անդամ սկսած 2010թ-ից, թեև "Զի-Էֆ-Սի Զեներալ Ֆայնենշլ ընդ Քրեդիթ Քոմփանի" ՈւՎԿ ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն, հանդիսանում էր ՎԿՄ հիմնադիր-անդամ 2008 թ-ից:



"Ինգո Արմենիա" ԱՓԲԸ ապահովվագրական գործակալ սկսած 2010թ-ից:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ



ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ



ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ունիվերսալ վարկային կազմակերպությունը, հանդիսանալով Ջի-Էֆ-Սի ՈւՎԿ ՍՊԸ իրավահաջորդը, մասնակցում է Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան-ի սկսված Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում իրականացվող գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրերին, տրամադրելով երկարաժամկետ վարկեր ազգային արժույթով: Ընկերությունը հաջողությամբ մասնակցել է վարկային ծրագրի առաջին եւ երկրորդ փուլերին եւ ստացել է պատվոգիր է ՀՄՀ-Հայաստանի կողմից: Հանդիսանալով ակտիվ եւ հուսալի գործընկեր, ընկերությունը ստացել է շնորհակալագիր Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայից Ջրից դեպի Շուկա վարկավորման ծրագրի իրականացման մեջ անգնահատելի ներդրում իրականացնելու համար: ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ-ն ակտիվորեն շարունակում է ՋդՀ ծրագրային վարկերի տրամադրումը Հայաստանի գյուղատնտեսական ոլորտում:



Գյուղական ֆինանսավորման Կառույց-ծրագրերի իրականացման գրասենյակ»-ի կողմից իրականացվում է փոքր և միջին գյուղական բիզնեսի զարգացմանը ուղղված փոխառության Համաձայնագրերի կնքումը տարբեր ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ, որոնց շարքում ծրագրին 2014 թ. Նոյեմբեր ամսից իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերում ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն:



Այս համագործակցության նպատակն է գյուղատնտեսական գործունեության ակտիվացմանը աջակցելը, գյուղական տարածքներում փոքր և միջին արտադրողների ու ձեռնարկատերերի համար ֆինանսական միջոցները առավել մատչելի և հասանելի դարձնելը: ԳՖԿ-ԾԻԳ-ի գործառույթներն իրականացվում են ԳՀՄՀ-IFAD շրջանակներում:



FAA

Ջի-Էֆ-Սի ՈւՎԿ ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն, մշակեց Հայաստանում աշխատատեղերի ստեղծման նպատակով վարկավորման ծրագիր և սկսեց համագործակցություն շվեյցարական “Fondation Alliance Armenienne – Geneva” (FAA) ընկերության հետ, որն էլ ընկերությանը տրամադրեց աննախադեպ պայմաններով երկարաժամկետ փոխառություն ՀՀ ազգային արժույթով, տարեկան 0% տոկոսադրույքով: Փոխառու միջոցները նոր աշխատատեղ ստեղծելու պայմանով ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ընկերության կողմից ուղղվում են ձեռնարկատերերին և գյուղացիական տնտեսություններին տարեկան առավելագույնը 7% ֆիքսված տոկոսադրույքով և ազգային արժույթով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ



ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ



2011 թ. սեպտեմբերի 28-ին Ջի-Էֆ-Սի ՈւՎԿ ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է հանդիսանում ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈւՎԿ ՓԲԸ-ն, DCA ծրագրի շրջանակում Երաշխիքի պայմանագիր է կնքել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության հետ: Երաշխիքային պայմանագրի համաձայն ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության DCA ծրագիրը կերաշխավորի ընկերության կողմից որպես փոխառություն միջազգային կամ տեղական ֆինանսական հաստատություններից ներգրաված մինչև 1.5 մլն ԱՄՆ դոլար կամ համարժեք դրամ գումարների վերադարձելիությունը 50 տոկոս չափով: Օգտվելով հնարավորությունից ընկերությունը մասնակիորեն օգտագործել է Երաշխիքը, 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ փոխառություն ներգրավելով հոլանդական Oikocredit ընկերությունից: 2015 թվականի մայիս ամսվա սկզբի դրությամբ DCA ծրագրի երաշխիքային միջոցները կարող են հանդես գալ մինչև 1,250,000 ԱՄՆ դոլար գումարի ներգրավվելիք նոր վարկի ապահովություն:



2016թ. օգոստոսի 1-ին <<Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա>> հիմնադրամի և ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր՝ համաձայն որի "Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում" ծրագրի շրջանակներում կազմակերպությանը տրամադրվել է 50 մլն ՀՀ դրամ գումարի փոխառություն՝ ենթավարկերի տրամադրման նպատակով:



2017թ. ընթացքում ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն բանակցություններ է վարում Frontera Capital Group Limited կազմակերպության հետ՝ համագործակցության պայմանագիր կնքելու նպատակներով, որի համաձայն ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ ՈՒՎԿ ՓԲԸ-ն հնարավորություն կունենա փոխառություն ներգրավել՝ ենթավարկերի տրամադրման նպատակով:



Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների ընդունելի հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա ռիսկերի անցանկալի ազդեցությունները: Ընկերությունը կարևորում է հետևյալ ռիսկերը.

- Վարկային ռիսկ,
- Տոկոսադրույքի ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ,
- Գործառնական ռիսկ:

Ռիսկերի պատշաճ մակարդակով կառավարման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկերի կառավարումն իրականացնում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն (ԱՊԿԿ):

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորությունը չկատարելու/ոչ պատշաճ կատարելու հետ, որը ընկերությանը կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Ընկերության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում:

Վարկային ռիսկի ամենօրյա կառավարումը իրականացվում է ընկերության վարկավորման բաժինների կողմից: Վարկային ռիսկի կառավարումը իրականացվում է վառկառուների գործունեության ընթացիկ մոնիտորինգի և պարբերաբար իրականացվող վերլուծությունների միջոցով: Հսկողության ընթացքում բացահայտվող վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում կազմակերպությունը իրավունք ունի դադարեցնել համագործակցությունը, ինչպես նաև պահանջել վարկերի վաղաժամկետ մարում:



ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիության ռիսկը ստանձնած պարտավորությունների չկատարելու հավանականությունն է, ինչի առաջացման պատճառ է հանդիսանում Կազմակերպության դրամական հոսքերի ժամկետային անհամապատասխանությունը և/կամ բավարար ծավալով իրացվելի ակտիվների բացակայությունը: Ընկերությունը իրացվելիության ռիսկը կառավարում է դրամական հոսքերի կառավարման և բարձր իրացվելի ակտիվներում ներդրումներ կատարելու միջոցով: Մասնավորապես, յուրաքանչյուր պահին Ընկերության բարձր իրացվելի ակտիվների և մինչև առաջիկա սահմանված վճարման ամսաթիվը դրամական հոսքերի հանրագումարը պետք է առնվազն բավարարի այդ վճարումը կատարելու համար: Եթե Ընկերության բարձր իրացվելի ակտիվները և ակնկալվող ներհոսքը բավարար չեն հերթական վճարումը կատարելու և միևնույն ժամանակ շարունակելու վարկավորումը, Ընկերությունը կարող է ժամանակավորապես դադարեցնել վարկավորումը (նվազեցնելու ծավալները) և կուտակել դրամական ներհոսքը հերթական վճարումը կատարելու նպատակով (ձևավորել մարման ֆոնդ): Իրացվելիության ռիսկի կառավարումը իրականացնելու է ԱՊԿԿ:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի ռիսկը հանդիսանում է շուկայական ռիսկի տարատեսակ և իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով վնաս կրելու ռիսկը: Տոկոսադրույքի ռիսկի կառավարումը իրականացնելու է ԱՊԿԿ-ն: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունը ձգտում է համապատասխանեցնել իր տեղաբաշխված և ներգրավված միջոցների մարումների ժամկետները, ինչպես նաև ժամանակ առ ժամանակ վերանայել իր կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Ռիսկի նվազեցման նպատակով սահմանափակվում են տոկոսադրույքի փոփոխությանը զգայուն ակտիվներում ներդրումների չափերը:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկը պայմանավորված է ընկերության անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացմամբ: Գործառնական ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով ընկերությունում փաստաթղթավորված կերպով նկարագրված են գրեթե բոլոր բիզնես գործընթացները, կազմված են ներքին իրավական ակտեր, սահմանված են համապատասխան սահմանաչափեր, կիրառվում են կրկնակի ստուգման/ հաստատման սկզբունքները, սահմանված են հաշվետվությունների տեսակները և պարբերականությունները:



ՆԵՐՔԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին հաշվետվողականությունը հանդիսանում է ռիսկերի կառավարման կարևորագույն բաղադրիչը: Ընկերությունում ներկայումս գործարկվում են ներքին հաշվետվություններ, որոնք սահմանված ժամկետներում պատրաստվում և տրամադրվում են ընկերության ղեկավարությանը, ԱՊԿԿ անդամներին և որոնց հիման վրա կայացվում են ռիսկերի կառավարման որոշումները: Ընկերությունը մշտապես միջոցառումներ է ձեռնարկում կատարելագործելու և ավտոմատացնելու ընկերության ներքին հաշվետվողականությունը:





ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ



Ուժեղ կողմեր

- ❑ Որակյալ վարկային պորտֆել,
- ❑ Վարկային գործիքները մշակված են հաշվի առնելով հաճախորդների պահանջները և ունեն մեծ պահանջարկ,
- ❑ Վարկային գործընթացի և վարկի տրամադրման արագություն
- ❑ Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիա, հնարավոր ռիսկերի դիմակայելու նպատակով
- ❑ Ղեկավարության և աշխատակազմի բարձր որակավորում
- ❑ Ֆինանսապես գրագետ և պրոֆեսիոնալ խորհուրդ
- ❑ Լավ ֆինանսական ցուցանիշներ: ROA=1.71%, ROE 11.59% (2017 թ. հունիսի 30-ի դրությամբ)
- ❑ Անդամակցությունը Վարկային կազմակերպությունների միությանը
- ❑ Կենտրոնական բանկի վերահսկողության ներքո
- ❑ 2016թ ինովացիոն վարկային կազմակերպություն
- ❑ Համագործակցություն վճարային համակարգերի հետ՝ Իդրամ, Մոբիդրամ, Իգի Փեյ ՍՊԸ, Թեյ-Սեյ ՓԲԸ

Թույլ կողմեր

- ❑ Մասնաճյուղային ցանցի բացակայությունը

Հնարավորություններ

- ❑ Ֆինանսական լիզինգի կիրառման հնարավորություն (գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների մասով)
- ❑ Նոր տարածաշրջաններ մուտք գործելու հնարավորություն
- ❑ Համագործակցության շարունակությունը հոլանդական Oikocredit և շվեյցարական FAA ընկերությունների հետ
- ❑ Երաշխիքային պայմանագիր USAID DCA ծրագրի հետ, որով հնարավոր կլինի ներգրավել նոր դրամական միջոցներ նոր գործընկերներից

Սպառնալիքներ

- ❑ Աճող մրցակցությունը, մրցակից ֆինանսական կառույցների չափազանց ռիսկային վարկավորման քաղաքականությունը (առանց վարկի խոր վերլուծության և ապահովության)
- ❑ Հաճախորդների վարկային ծանրաբեռնվածության աճը:
- ❑ Հատկապես գյուղական վայրերից հնարավոր հաճախորդների ժամանակավոր կամ մշտական արտագաղթը:
- ❑ Արտարժույթի արժեքի տատանումներն ու հնարավոր աճը, ինչը կդժվարացնի դոլարային վարկերի վերադարձը:



ԳԼԴՐԱԼ ԿՐԵԴԻՏ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016թ. և 2017թ. Առաջիկ կիսամյակների ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (հազար դրամ)

FINANCIAL INFORMATION

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ	2017թ.1-ին կիսամյակ	2016թ.1-ին կիսամյակ	Փոփոխություն (%)
Ակտիվներ	13,067,341	11,138,191	17%
Վարկային պորտֆել	11,301,303	9,784,700	15%
Պարտավորություններ	11,257,430	9,790,438	15%
Փոխառություններ	9,666,880	9,044,881	7%
Սեփական կապիտալ	1,809,911	1,347,753	34%
Եկամուտ	1,351,027	915,413	48%
Տոկոսային եկամուտ	942,897	729,085	29%
Ոչ տոկոսային եկամուտ	408,130	186,328	119%
Ծախսեր	1,107,295	739,968	50 %
Տոկոսային ծախսեր	436,850	391,861	11 %
Ոչ տոկոսային ծախսեր	670,445	348,107	93%
Զուտ շահույթ հարկումից հետո	214,373	139,445	54%
Ընդամենը համապարփակ եկամուտ	214,373	139,445	54%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՑԱՆԻՇՆԵՐ

ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ



❑ Կապիտալի հարաբերակցություն (ԿՀ) -

Այն ներկայացնում է ակտիվների գումարը, որոնց հանդեպ բաժնետերերն ունեն մնացորդային պահանջ:

$$\text{ԿՀ} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Ընդամենը ակտիվներ}}$$

❑ Կապիտալը վարկային պորտֆելի հարաբերակցություն (ՍԿ / ՎՊ) -

Այն ցույց է տալիս սեփական կապիտալի մասնաբաժինը վարկային պորտֆելում:

$$\text{ՍԿ/ՎՊ} = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Վարկային պորտֆել}}$$

❑ Շահույթի մարժա (ՇՄ)

Այն չափում է եկամտի յուրաքանչյուր դրամից ինչքան է ընկերությունը պահում որպես շահույթ:

$$\text{ՇՄ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընդամենը եկամուտ}}$$

❑ Վարկային պոևտֆելի միջին տոկոսադրույքը(S)

Այն չափում է վարկային պորտֆելի կողմից գոյացրած տոկոսային եկամտի մասը:

$$S = \frac{\text{Տոկոսային եկամուտ}}{\text{Վարկային պորտֆել}}$$

❑ Ծախսերի հարաբերակցություն (ԳԾՀ)

Այն ցույց է տալիս միավոր եկամտի հաշվով ծախսերի քանակը:

$$\text{ԳԾՀ} = \frac{\text{Ընդամենը ծախսեր}}{\text{Ընդամենը եկամուտ}}$$

❑ Կապիտալի միջին եկամտաբերություն (ԿՄԵ)

Այն չափում է ընկերության եկամտաբերությունը՝ բացահայտելով թե ինչքան շահույթ է ընկերությունը ստեղծում բաժնետերերի կողմից ներդրվող գումարով:

$$\text{ԿՄԵ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Սեփական կապիտալ}}$$

❑ Ակտիվների միջին եկամտաբերություն (ԱՄԵ)

Այն տալիս է պատկերացում, թե ինչքան արդյունավետ է ընկերությունը փոխակերպում զուտ եկամտի համար ներդրվող դրամական միջոցները:

$$\text{ԱՄԵ} = \frac{\text{Զուտ շահույթ հարկումից հետո}}{\text{Ընդամենը ակտիվներ}}$$

❑ Պ/Կ հարաբերակցություն (Պ/Կ)

Այն Այն ցույց է տալիս թե կապիտալի և պարտավորության որ մասն է ընկերությունն օգտագործում ֆինանսավորելու իր ակտիվները:


$$\text{Պ/Կ} = \frac{\text{Ընդամենը պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017թ. ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ




2017 - 1-ին կիսամյակ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ




ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏՎՆԵՐԸ, ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼԸ 2016 և 2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ՎԵՐՋՈՒՄ



- Ակտիվների աճ – 17 %
- Վարկային պորտֆելի աճ – 15 %
- Պարտավորություններ -15%
- Սեփական կապիտալի աճ – 34 %



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԸ 2016 և 2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ՎԵՐՋՈՒՄ




- Համախառն եկամտի աճ – 48 %
- Տոկոսային եկամտի աճ – 29 %
- Զուտ շահույթի աճ – 54 %






**ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 2017թ. հունիսի 30-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ – 9,568
(ըստ վարկատեսակների)**







ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԸ 2017թ. հունիսի 30-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ – 11,661,000,000 ՀՀ դրամ
(ըստ վարկատեսակների)




ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՔԱՆԱԿԸ 2017թ.



ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2017թ. հունիսի 30 (հազար դրամ)



ԱԿՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԸ 2017թ. հունիսի 30 (հազար դրամ)




ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



Հաշվի առնելով հաճախորդների կողմից խոշոր վարկերի գծով մարումներ կատարելու դժվարության հավանականությունը և հնարավոր ռիսկերը զսպելու նպատակով կազմակերպությունը ձգտում է հնարավորինս փոքրացնել միջին վարկերի մեծությունը և միաժամանակ ավելացնել գործող հաճախորդների քանակը:

ՀԱՄԱԽԱՈՒՆ ՎԱՐԿԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ 2017թ. (հազար դրամ)






ԳԼՈՒԲԱԼ ԿՐԵԴԻՏ

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2017թ. 2-րդ կիսամյակ (հազար դրամ)

	2017-3	2017-4
Սպառողական վարկեր	1,931,000	2,219,000
Հիփոթեքային վարկեր	6,010,000	6,280,000
Փոքր/Միջին բիզնես վարկեր	425,000	475,000
Գյուղատնտեսական վարկեր	1,656,000	1,711,000
Ֆակտորինգ	20,000	18,000
Ռեզիդենտ ֆիզիկական անձինք	10,042,000	10,703,000
Ռեզիդենտ իրավաբանական անձինք	2,450,000	2,500,000
Ընդամենը Վարկային պորտֆել	12,492,000	13,203,000



«ԳԵՂԱՐԱՆ ԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերության առաջիկա տարիների հեռանկարային նպատակը կայանում է նրանում, որ կազմակերպությունը ձգտում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ստեղծել և սպասարկել առցանց վարկավորումը:

Ինչպես նաև կազմակերպությունը նախատեսում է ակտիվորեն իրականացնել միջոցառումներ՝ մեծացնելու վարկային պորտֆելը, պահպանելով դրա անհրաժեշտ որակը, բարելավելու վարկային գործիքները, շարունակելու որակյալ ֆինանսական ծառայությունների տրամադրումը և, դրանով պայմանավորված, ավելացնելու գործող հաճախորդների քանակը:

Միաժամանակ, ընկերությունը շարունակելու է աշխատանքն ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, որոնց հետ համագործակցության արդյունքում ներգրավված դրամական փոխառու միջոցներն ուղղվում են երկրի տնտեսության զարգացման համար առավել կարևոր ճյուղեր, ինչպես նաև ծառայում ցածր եկամուտ ունեցող գործարար ակտիվ բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

«ԳԵՂԱՐԱՆ ԿՐԵԴԻՏ» ՈւՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը ֆիզիկական անձանցից, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերից և իրավաբանական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով սույն թվականի նոյեմբեր ամսին մտադիր է իրականացնել պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում:





- 27.01.2016թ.-ին ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայում ազդարարվեց «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 1»-ի անվական արժեկտրոնային պարտատոմսերի բորսայական առևտրի մեկնարկը: Հիմնադրամի առաջին թողարկման ժամանակ «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ձեռք բերեց Մասնակցության Վկայագիր:
- **2016թ. սեպտեմբերի 8-ին** կայացած Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ՝ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման միջոցով, համալրվել է Ընկերության կանոնադրական կապիտալը 500 000 000 ՀՀ դրամով: ՀՀ Կենտրոնական Բանկը 22.09.2016թ. գրանցել է «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն որի Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանվում է 1 500 000 000 ՀՀ դրամ:
- **2016 թվականի նոյեմբերի 24-ին** «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերը հաջողությամբ տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով:
- Երրորդ թողարկման դուլարային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 1,663,372 ԱՄՆ դոլար: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 1,000,371.71 ԱՄՆ դոլար: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 100 ԱՄՆ դոլար, կտրման եկամտաբերությունը՝ 9%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 8.9856%
- Չորրորդ թողարկման դրամային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 410,030,102 ՀՀ դրամ: Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 200,030,102.30 ՀՀ դրամ: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 10,000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 14%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.9911%:



- 2016թ. ընթացքում «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն մի շարք համագործակցության պայմանագրեր է կնքել՝ մասնավորապես «Մոբի դրամ» ՓԲԸ-ի, «Իզի Փեյ» ՍՊԸ-ի և «Իդրամ» ՍՊԸ-ի հետ, համաձայն որոնց կազմակերպության հաճախորդներն ամսական վճարումները կարող են կատարել վերոնշյալ վճարային համակարգերի միջոցով:
- **2016թ. նոյեմբերի 1-ին** «Գլոբալ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպության և «Իդրամ» ընկերության միջև կնքվել է համագործակցության պայմանագիր, համաձայն որի այսուհետ ԻԴՐԱՄ հաշիվը հնարավոր կլինի համալրել «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ-ից ստացած վարկի միջոցով:
- «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն՝ « ՌԵՆԵՍԱ » ՓԲԸ ներդրումային ընկերության հետ համագործակցության շրջանակում 2017թ. մարտ ամսին իրականացել է ինովացիոն ստարտափների ֆինանսանսավորման ծրագիր, որի նպատակն է մատչելի վարկավորման և վենչուրային կապիտալ ներդրումների իրականացման միջոցով աջակցել տեխնոլոգիական և այլ ոլորտներում նորարարական գաղափարներ ունեցող թիմերին/ ընկերություններին կյանքի կոչելու այդ գաղափարները՝ դարձնելով դրանք եկամտաբեր բիզնես:
- Նոր համագործակցություն 4car.am ՍՊԸ-ի հետ. համաձայն որի այսուհետ www.4car.am կայքի միջոցով կազմակերպության պոտենցյալ հաճախորդները հնարավորություն կունենան դիմել ավտոմեքենայի գրավադրման համար: